ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/3841/05/25
Նախագահող դատավոր՝ Գ. Սոսյան
Դատավորներ՝ Հ. Խաչատրյան
Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/3841/05/25**
2026թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 16-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 27.04.2026 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Սամվել Սմբատյանի ընդդեմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ Ծառայության 02.02.2025 թվականի թիվ 8250079240 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սամվել Սմբատյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 02.02.2025 թվականի թիվ 8250079240 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Տ. Սանթրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 03.07.2025 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.04.2026 թվականի որոշմամբ Սամվել Սմբատյանի վերաքննիչ բողոքն ամբողջությամբ բավարարվել է՝ Դատարանի 03.07.2025 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ՝ Ներսես Հակոբյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ, 255-րդ և 267-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ, 42-րդ և 124-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով վերոնշյալ հոդվածները, սխալ գնահատական է տվել հայցվորի նկատմամբ կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը:

Հայցվորի նկատմամբ 02.02.2025 թվականին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության *«արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների և պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա»* հատվածում առկա է հայցվորի ստորագրությունը, ինչից պարզ է դառնում, որ հայցվորին բացատրվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները: Բացի իրավունքներին ու պարտականություններին ծանոթացնելուց՝ հայցվորին տրամադրվել է նաև իր իրավունքների և պարտականությունների մասին քաղվածքը:

Բացի այդ, թիվ ՎԴ/13509/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածին տրվել է սույն գործով բողոքարկվող որոշմամբ նույն նորմին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանություն, համաձայն որի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն իրավախախտում կատարած անձի կողմից ստորագրելը փաստում է վերջինիս կողմից իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ծանուցվելու մասին:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 27.04.2026 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայության կողմից 02.02.2025 թվականին ժամը 00:27-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որի համաձայն՝ Սամվել Սմբատյանը Լոռու մարզ, Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտայում 01.02.2025 թվականին ժամը 23:45-ին տրանսպորտային միջոցը վարել է ոչ սթափ վիճակում, վարորդի մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0,5 միլիգրամը: Նշված արձանագրության *«Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա»* տողում առկա է ստորագրություն **(գ.թ. 9).**

2) Ծառայության 02.02.2025 թվականի «Վարչական իրավախախտման գործով» թիվ 8250079240 որոշմամբ Սամվել Սմբատյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 1 տարի ժամկետով **(գ.թ. 9).**

3) Ծառայության պետի 07.03.2025 թվականի թիվ 91/98/64376 որոշմամբ Ծառայության 02.02.2025 թվականի «Վարչական իրավախախտման գործով» թիվ 8250079240 որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ Սամվել Սմբատյանի վարչական բողոքը՝ առանց բավարարման **(գ.թ. 11-12):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ թիվ ՎԴ/13509/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածը, կիրառվել է հակասող մեկնաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

(...):

Վճռաբեկ դատարանը, օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իր առաքելությունն իրացնելու և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով,

վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության «Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումը ստացա» հատվածում իրավախախտում թույլ տված անձի ստորագրության առկայությունը բավարար է հաստատված համարելու պարեկային ծառայողի կողմից վարչական պատասխանատվության ենթարկվող անձին՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները բացատրված լինելու փաստը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները, այդ թվում՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները, ապացույցների տեսակները, դրանց գնահատումը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը ներկայացվող պահանջները, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս և վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս պարզման ենթակա հարցերը, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու և վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշումը կայացնելու կարգն ու պայմանները սահմանող իրավական ակտ է հանդիսանում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը (…):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Այդ տվյալները, ի թիվս այլնի, հաստատվում են նաև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ընդհանուր կանոնները, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ և 255-րդ հոդվածներով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու

իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) (…):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 255-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը. տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը. այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար. վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան. խախտողի բացատրությունը. գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը. վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք:

Եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, (…) ապա դրանում այդ մասին նշում է կատարվում: Իրավախախտում կատարած անձն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, ինչպես նաև շարադրելու այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները:

Արձանագրություն կազմելիս (…) խախտողին բացատրվում է նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին արձանագրության մեջ նշում է արվում:

Արձանագրությունը թվային եղանակով կազմելու դեպքում իրավախախտում կատարած անձի ստորագրությունն ստացվում է թվային եղանակով, իսկ նրա՝ բացատրություն տալու և դիտողություններ անելու իրավունքի իրացման փաստը և բովանդակությունն ամրագրվում են տեսաձայնագրման միջոցով: (…):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից. ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը. գանգատարկելու գործով որոշումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը մեկնարկում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմամբ և

եզրափակվում նույն օրենսգրքի 282-րդ հոդվածով նախատեսված հետևյալ որոշումներից որևէ մեկի կայացմամբ. վարչական տույժ նշանակելու մասին որոշում կամ գործի վարույթը կարճելու մասին որոշում *(տե՛ս, Հադի Գուլոզիին ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/6934/05/21 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.10.2025 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի մեկնարկը պայմանավորելով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմամբ՝ օրենսդիրը կարևորել է նշված ապացույցը, ինչն արտահայտվել է մասնավորապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բովանդակությանը ներկայացվող կոնկրետ պահանջների ամրագրմամբ: Նշված իրավանորմը, սակայն, չի պարունակում հատուկ կարգավորում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու վայրի մասին: Այդուհանդերձ, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ որոշ տեղեկությունների պարտադիր ներառման ենթակա լինելը վկայում է այն մասին, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որպես կանոն, պետք է կազմվի վարչական իրավախախտումը հայտնաբերելու պահին՝ վարչական իրավախախտումը կատարելու վայրում:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի մասնակցությամբ կազմելու օրենսդրական կարգավորումը, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելու համար, քանի որ վերջինս պետք է իրական հնարավորություն ունենա դիրքորոշում հայտնելու վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի մեկնարկի փուլից սկսած և ներկայացնի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ պարտադիր ներառման ենթակա տեղեկություններ՝ դրանով իսկ նպաստելով տվյալ գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են տեղեկություններ խախտողի անձի մասին, վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը, վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան, խախտողի բացատրությունը, արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը, վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք, եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում:

(…) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որպես կանոն, պետք է կազմվի վարչական իրավախախտումը հայտնաբերելու պահին՝ վարչական իրավախախտումը կատարելու վայրում: Այս կանոնից, սակայն, որոշ հանգամանքներով պայմանավորված կարող են լինել բացառություններ, (…) *(տե՛ս, Վահրամ Խաչատրյանն ընդդեմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի թիվ ՎԴ/4076/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2026 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը պետք է կազմեն ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ, և վերջինս պետք է ստորագրի այն, իսկ եթե նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու իրավասություն ունեցող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) դրա մասին համապատասխան նշում է կատարում արձանագրության մեջ: Անձը, որին վերագրվում է ենթադրյալ վարչական իրավախախտումը, իրավունք ունի ներկայացնել բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, որոնք կցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը, իսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա կարող է արձանագրությունում շարադրել այն շարժառիթները, որոնք իր կարծիքով հիմք են հանդիսացել արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու համար: Բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն կազմելիս անձին պետք է բացատրեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ նրա իրավունքներն ու պարտականությունները, և դրա մասին նույնպես համապատասխան նշում կատարեն արձանագրության մեջ *(տե՛ս, Գառնիկ Վերմիշյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0150/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2019 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված իրավունքներն ու պարտականությունները ենթադրյալ իրավախախտին արձանագրությունը կազմելիս բացատրելու կանոն սահմանելն ինքնանպատակ չէ, այդպիսի կանոնը միտված է ենթադրյալ իրավախախտին իր իրավունքների և պարտականությունների մասին հենց վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի մեկնարկի՝ արձանագրությունը կազմելու պահից իրազեկելուն՝ այդպիսով հնարավորություն տալով նրան առավել արդյունավետ իրացնելու իր իրավունքները և մասնակցել իր նկատմամբ կազմվող վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բովանդակության ձևավորմանը: Այս իմաստով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածը, ըստ էության, հանդիսանում է վարչական պատասխանատվության վարույթի հիմնասյուներից մեկը, քանի որ այն ապահովում է անձի՝ վարչական վարույթի մեկնարկից սկսած լսված լինելու իրավունքի իրացման, ըստ այդմ նաև իր իրավունքներն արդյունավետ կերպով պաշտպանելու իրական հնարավորություն: Այսինքն՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձին նրա իրավունքներն ու պարտականությունները բացատրելու կանոնը հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության ապահովման կարևոր երաշխիք, ինչի հաշվառմամբ օրենսդիրը նախատեսել է վարչական իրավախախտման

վերաբերյալ արձանագրությունը կազմելիս անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները բացատրելու փաստն ամրագրելու կարգը, այն է՝ նույն արձանագրության մեջ կատարվում է համապատասխան գրառում, որն անձը վավերացնում է իր ստորագրությամբ *(տե՛ս, Կարեն Շահբազյանն ընդդեմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության թիվ ՎԴ/2072/05/24 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2026 թվականի որոշումը):*

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ (...): Ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատում է ոստիկանության պետը:

ՀՀ ոստիկանության պետի 23.09.2020 թվականի «Ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» թիվ 36-Լ հրամանի 1-ին կետով հաստատվել է Ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք)՝ համաձայն հավելվածի:

Կանոնագրքի 3-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերի համաձայն՝ ոստիկանության՝ օրենքով նախատեսված խնդիրներն իրականացնելիս պարեկային ծառայությունը՝ ապահովում է (...) ճանապարհային երթևեկության անվտանգությունը, իր իրավասության սահմաններում հասարակական վայրերում կանխում, հայտնաբերում, խափանում է ոստիկանության քննությանը ենթակա վարչական իրավախախտումները և կիրառում է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Կանոնագրքի 45-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ պարեկային ծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարելիս լիազորված է կազմել վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, (...) կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված այլ միջոցներ:

Կանոնագրքի 8-րդ բաժնով սահմանվել են վարչական իրավախախտումների արձանագրման ժամանակ պարեկային ծառայողների գործողությունները:

Մասնավորապես, Կանոնագրքի 142-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման դեպք հայտնաբերելիս՝ պարեկային ծառայողները մոտենում են համապատասխան խախտումը կատարած անձին, ներկայանում՝ պատվի առնելով, վերջիններիս հասկանալի ձևով ներկայանում՝ հայտնելով իրենց պաշտոնը, կոչումը, ազգանունը և ստորաբաժանումը: Անձի խնդրանքով պարեկային ծառայողները ներկայացնում են նաև իրենց ծառայողական վկայականը կամ ոստիկանության ծառայողի անհատական կրծքանշանը:

Կանոնագրքի 143-րդ կետի համաձայն՝ պարեկային ծառայողը վարչական իրավախախտում կատարած անձին հայտնում է, թե ինչ իրավախախտում է իր կողմից կատարվել և ինչպես է այն դրսևորվել, մատնանշում է համապատասխան իրավական նորմը, որով սահմանված է կատարված խախտումը:

Կանոնագրքի 144-րդ կետի համաձայն՝ պարեկային ծառայողը վարչական իրավախախտում կատարած անձին տեղեկացնում է, որ դրսևորած վարքագիծը առաջացնում է վարչական պատասխանատվություն, որից հետո իրավախախտման վայրում պարեկային ծառայողին ամրակցված պլանշետի հատուկ ծրագրային

ապահովման միջոցով կազմվում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

Կանոնագրքի 146-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ՝ համապատասխան հատկացված հատվածում, իրավախախտում կատարած անձից պարեկային ծառայողը վերցնում է բացատրություն: Պարեկային ծառայողը իրավախախտին տեղեկացնում է դիտողություններ, առարկություններ ներկայացնելու իրավունքի վերաբերյալ՝ ապահովելով անձի լսված լինելու իրավունքի իրացումը: Բացատրում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները:

Կանոնագրքի 148-րդ կետի համաձայն՝ պարեկային ծառայողը վարչական պատասխանատվության ենթարկված անձին պարտադիր տեղեկացնում է որոշման բողոքարկման կարգը (վարչական, ինչպես նաև դատական կարգով՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում):

Անդրադառնալով պարեկային ծառայողի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արձանագրության կազմմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել հետևյալը.

Պարեկային ծառայողի կողմից արձանագրություն կազմելն իրավական կարևոր գործընթաց է, որն ունի հետևյալ հիմնական նպատակները.

1. իրավունքների և պարտականությունների իրազեկման հավաստում. արձանագրություն կազմելիս պարեկային ծառայողը պարտավոր է տեղեկացնել ենթադրյալ իրավախախտում թույլ տված անձին իր իրավունքների և պարտականությունների մասին, լսել և արձանագրել նրա բացատրությունները կամ առարկությունները, պարզաբանել բողոքարկման կարգը:

2. Ենթադրյալ իրավախախտման փաստի ամրագրում. արձանագրությունը, վարույթային փաստաթուղթ է, որում, ի թիվս այլնի, նշվում են ենթադրյալ իրավախախտման հիմքը և էությունը, դեպքի ժամն ու վայրը:

3. Ապացուցողական հիմքի ստեղծում. արձանագրությունը, ըստ էության, այն հիմնական ապացույցն է, որը հիմք է հանդիսանում ենթադրյալ իրավախախտման փաստը հաստատված համարելու և անձի նկատմամբ համապատասխան պատասխանատվության միջոցը կիրառելու:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հատուկ ընդգծել, որ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի կողմից արձանագրության՝ *«արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների և պարտականությունների մասին քաղվածքը (...) ստացա»* տողում կատարված ստորագրությունը հանդիսանում է իր իրավունքների և պարտականությունների մասին անձի իրազեկվածության փաստը վերջինիս կողմից ընդունելու բավարար հիմք: Այսինքն՝ արձանագրության համապատասխան դաշտում ստորագրելով՝ անձը փաստացի ընդունում է, որ իրազեկվել է իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, և այդ ստորագրությունը հիմք է հանդիսանում հետևություն անելու այն մասին, որ իրավասու պաշտոնատար անձը պատշաճ կատարել է օրենքով իրեն վերապահված պարտականությունը՝ տեղեկացնելով անձին իր իրավունքների և պարտականությունների մասին:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավական տեսանկյունից որպես ապացույց բավարար է արձանագրության մեջ՝ *«Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա»* տողում ենթադրյալ իրավախախտում թույլ տված անձի ստորագրության առկայությունը՝ փաստելու համար, որ անձը պատշաճ իրազեկվել է իր իրավունքների և պարտականությունների մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կարող է գնահատվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջներին բավարարող և հիմք հանդիսանալ տուգանք կիրառելու մասին որոշում կայացնելու համար, եթե այն, ի թիվս այլնի, պարունակում է նաև նշում արձանագրություն կազմելիս խախտողին նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները բացատրելու մասին, ինչը ենթադրյալ զանցառուն հաստատում է Ոստիկանության պարեկային ծառայության պաշտոնատար անձի կողմից կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության՝ *«Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա»* տողում ստորագրելով: Այսինքն՝ Ոստիկանության պարեկային ծառայության պաշտոնատար անձի կողմից կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության՝ *«Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա»* տողում ենթադրյալ զանցառուի ստորագրության առկայությունը, ըստ էության, դիտվում է որպես անձի կողմից այդ տողում նշված համապատասխան փաստի ընդունում, եթե առկա չեն դիտողություններ կամ արձանագրված փաստը հերքող այլ ապացույցներ *(տե՛ս, Կարեն Շահբազյանն ընդդեմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության թիվ ՎԴ/2072/05/24 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2026 թվականի որոշումը)*:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Սամվել Սմբատյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 02.02.2025 թվականի թիվ 8250079240 որոշումը:

Դատարանը 03.07.2025 թվականի վճռով հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ «*(…) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության՝ իրավունքների ու պարտականությունների մասին տեղեկանքը ստանալու և արձանագրությանը ծանոթանալու համար նախատեսված հատվածում առկա է հայցվորի ստորագրությունը, ինչից ողջամտորեն հետևում է, որ արձանագրությունը կազմվել է վերջինիս ներկայությամբ, հայցվորը ծանուցված է եղել իր իրավունքների ու պարտականությունների մասին, դրա համար ստորագրել է արձանագրությունում, սակայն բացատրության համար նախատեսված հատվածում որևէ բացատրություն չի տվել, ինչից էլ հետևում է, որ*

հայցվորին տրվել է հնարավորություն իր դիրքորոշումը արձանագրությունում գրավոր հայտնելու, սակայն վերջինս, ստորագրելով արձանագրությունը, որևէ դիրքորոշում չի հայտնել: (…)»:

Վերաքննիչ դատարանը 27.04.2026 թվականի որոշմամբ Սամվել Սմբատյանի վերաքննիչ բողոքն ամբողջությամբ բավարարել է՝ Դատարանի 03.07.2025 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանել և փոփոխել է՝ հայցը բավարարել է՝ այն պատճառաբանությամբ, որ «*(…) հաստատվում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստական հանգամանքը, որ վիճարկվող որոշման ընդունման հիմքում դրված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելիս հայցվորին չեն բացատրվել օրենքով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները՝ հանգեցնելով հայցվորի արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի սահմանափակման: Մասնավորապես՝ գործի փաստական տվյալներից հետևում է, որ թեև վիճարկվող որոշման ընդունմանն ուղղված վարչական իրավախախտման վարույթում՝ 02.02.2025 թվականին կազմված արձանագրության մեջ՝ «Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա» տողում առկա է հայցվորի ստորագրությունը, սակայն հայցվորը հայցադիմումով պնդել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականություններն իրեն չեն պարզաբանվել, իսկ վերոհիշյալ նորմով սահմանված պայմանը հաղթահարված կարող է համարվել հսկողական տեսախցիկով կատարված տեսանյութի ուսումնասիրության արդյունքում, մինչդեռ պարեկային ծառայողի համազգեստի վրա կրվող տեսախցիկի տեսանյութում ընդհանրապես բացակայում է հայցվորին օրենքով նախատեսված իրավունքները և պարտականությունները բացատրելու հատվածը: (…):*

(…) թեև վիճարկվող որոշման հիմքում դրված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ՝ «Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա» տողում առկա է հայցվորի ստորագրությունը, սակայն հաշվի առնելով այդ մասով հայցվորի փաստարկները, ինչպես նաև այն հանգամանքը, որ պարեկային ծառայողի համազգեստի վրա կրվող տեսախցիկի տեսանյութում ընդհանրապես բացակայում է հայցվորին օրենքով նախատեսված իրավունքները և պարտականությունները բացատրելու հատվածը, վերոհիշյալ վիճելի հարցը չի կարող համարվել հաստատված, այսինքն՝ գործի տվյալներով չի հաստատվում, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս հայցվորին բացատրվել են օրենքով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները: (…):

Վերոգրյալ պատճառաբանությամբ վերաքննիչ բողոքը բավարարելու պայմաններում Վերաքննիչ դատարանն այլևս չի անդրադառնում վերաքննիչ բողոք բերած անձի մյուս փաստարկներին, քանի որ դրանք վերաքննիչ բողոքի լուծման տեսանկյունից չունեն որևէ իրավական նշանակություն՝ հաշվի առնելով, որ հայցվորի արդյունավետ իրավական

պաշտպանության միջոցի իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտի դեպքում դրան վերաբերող ամբողջ վարույթն արդեն իսկ ոչ իրավաչափ է»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության կողմից 02.02.2025 թվականին ժամը 00:27-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որի համաձայն՝ Սամվել Սմբատյանը Լոռու մարզ, Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտայում 01.02.2025 թվականին ժամը 23:45-ին տրանսպորտային միջոցը վարել է ոչ սթափ վիճակում, վարորդի մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0,5 միլիգրամը: Նշված արձանագրության *«Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա»* տողում առկա է ստորագրություն:

Ծառայության 02.02.2025 թվականի «Վարչական իրավախախտման գործով» թիվ 8250079240 որոշմամբ Սամվել Սմբատյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 1 տարի ժամկետով:

Ծառայության պետի 07.03.2025 թվականի թիվ 91/98/64376 որոշմամբ Ծառայության 02.02.2025 թվականի «Վարչական իրավախախտման գործով» թիվ 8250079240 որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ Սամվել Սմբատյանի վարչական բողոքը՝ առանց բավարարման:

Տվյալ դեպքում Ծառայության 02.02.2025 թվականի թիվ 8250079240 որոշումը վիճարկելու հիմքերից մեկը, որն էլ հենց հատուկ քննարկման առարկա է դարձվել Վերաքննիչ դատարանի կողմից, վերաբերում է նրան, որ պարեկային ծառայողը չի կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքները և պարտականությունները պարզաբանելու՝ նույն օրենսգրքի 255-րդ հոդվածով ամրագրված պարտականությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն

ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: (...) ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին *(տե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարության աոընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից քննարկված միակ հիմքին, որը բավարար է համարվել վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու համար, արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, գնահատելով *«Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցումը ստացա»* տողում առկա ստորագրությունը, նշել է, որ պարեկային ծառայողի համազգեստի վրա կրվող տեսախցիկի տեսանյութում ընդհանրապես բացակայում է հայցվորին օրենքով նախատեսված իրավունքները և պարտականությունները բացատրելու հատվածը, ուստի նշված վիճելի հարցը չի կարող համարվել հաստատված:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստացի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունում առկա ստորագրությունը Վերաքննիչ դատարանը բավարար չի համարել հաստատված համարելու այն հանգամանքը, որ վարչական մարմինը կատարել է իր՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված պարտականությունը: Ավելին՝ Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ պարեկային ծառայողի համազգեստի վրա կրվող տեսախցիկի տեսանյութը թույլ չի տալիս նշված հանգամանքը պարզել՝ այդպիսով ստեղծելով նորմի այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ պարեկային ծառայողին կցված տեսախցիկով ամրագրված տեսագրության մեջ պետք է երևա անձին իր իրավունքները և պարտականությունները բացատրելու պահը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նորմի նման մեկնաբանությունը չի բխում նորմի նպատակից և վարչական մարմնի օրինաչափ գործելու կանխավարկածի հաղթահարման որևէ հիմք առկա չլինելու պայմաններում ստեղծում է նորմի չափազանց ձևական մեկնաբանություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմինը, կատարելով իր վրա դրված պարտականությունը՝ արձանագրությունը կազմելիս անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները բացատրելը, այն ամրագրում է նույն արձանագրության մեջ համապատասխան գրառում կատարելով:

Տվյալ դեպքում արձանագրության վարչական մարմնի կողմից լայնորեն կիրառվող համապատասխան ձևանմուշի «արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների և պարտականությունների մասին քաղվածքը (…) ստացա» տողում անձի կողմից դրվել է ստորագրություն՝ առանց ձևանմուշի համապատասխան տողում նշվածը արտագրելու կամ այլ կերպ վերարտադրելու՝ ապահովելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված անձին նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքները և պարտականությունները բացատրելու պահանջի կատարումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ Սամվել Սմբատյանի կողմից արձանագրության՝ *«արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների և պարտականությունների մասին քաղվածքը (…) ստացա»* տողում կատարված ստորագրությունը հիմք է հանդիսանում փաստելու, որ վերջինիս բացատրվել են իր իրավունքները և պարտականությունները, ինչի կապակցությամբ էլ նա ստորագրել է արձանագրության համապատասխան հատվածում: Հակառակ դեպքում արձանագրության համապատասխան մասում Սամվել Սմբատյանի ստորագրության առկայությունը որևէ այլ ողջամիտ մեկնաբանություն չի կարող ունենալ:

Հետևաբար սույն գործով կազմված արձանագրության մեջ *«արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների և պարտականությունների մասին քաղվածքը (…) ստացա»* տողում առկա Սամվել Սմբատյանի ստորագրությունը թույլ է տալիս իրավաչափ եզրահանգում կատարել վարչական մարմնի նշված պարտականությունը կատարված լինելու վերաբերյալ, իսկ տեսագրության մեջ այդ հանգամանքի արտացոլված չլինելը որևէ էական նշանակություն չի կարող ունենալ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ *«(…) պարեկային ծառայողի համազգեստի վրա կրվող տեսախցիկի տեսանյութում ընդհանրապես բացակայում է հայցվորին օրենքով նախատեսված իրավունքները և պարտականությունները բացատրելու հատվածը, (…)»*՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ օրենսդիրը հստակեցրել է, որ տեսաձայնագրման միջոցով ամրագրվում է ոչ թե ենթադրյալ իրավախախտում կատարած անձին պարեկային ծառայողի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ նրա իրավունքներն ու պարտականությունները բացատրելու հանգամանքը, այլ նրա՝ բացատրություն տալու և դիտողություններ անելու իրավունքի իրացման փաստը և բովանդակությունը, ընդ որում՝ նշվածը միայն այն դեպքում, երբ արձանագրությունը կազմվում է թվային՝ տեսաձայնագրման եղանակով: Նման

պայմաններում, Վճռաբեկ դատարանն անհիմն է գնահատում Վերաքննիչ դատարանի վերոգրյալ հետևությունը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի վերաբերյալ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշմամբ և թիվ ՎԴ/13509/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.02.2023 թվականի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմի վերաբերյալ արտահայտված միմյանց հակասող մեկնաբանություններին, որը, որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքի հիմնավորում, վկայակոչել է նաև բողոքաբերը:

Այսպես. թիվ ՎԴ/13509/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 03.02.2023 թվականի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, ըստ էության, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության «Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների և պարտականությունների մասին քաղվածքը և խախտման քննարկման վայրի ու ժամանակի վերաբերյալ ծանուցումն ստացա» հատվածում վարչական պատասխանատվության ենթարկվող անձի կողմից կատարված ստորագրությունը բավարար է փաստելու, որ վերջինիս բացատրվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

Մինչդեռ, սույն գործով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը ստացված լինելու հատվածում անձի ստորագրության առկայությունն ինքնին թույլ չի տալիս հաստատված համարելու այն հանգամանքը, որ վարչական իրավախախտման արձանագրությունը կազմվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջի պահպանմամբ:

Վճռաբեկ դատարանը, արժևորելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական առաքելությունը, անհրաժեշտ է համարում նշել, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որում վարչական պատասխանատվության ենթարկվող անձը կատարել է նշում՝ ստորագրելով «Արձանագրությանը ծանոթացա, իմ իրավունքների ու պարտականությունների մասին քաղվածքը (...) ստացա» տողում, հանդիսանում է բավարար հիմք՝ փաստելու, որ իրավասու պաշտոնատար անձը պատշաճ կատարել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ վարչական պատասխանատվության ենթարկվող անձին նրա իրավունքներն ու պարտականությունները բացատրելու իր պարտականությունը, ինչը համահունչ է թիվ ՎԴ/13509/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.02.2023 թվականի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով արտահայտված մեկնաբանությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 255-րդ հոդվածը՝ վարչական

իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ վարչական պատասխանատվության ենթարկվող անձին նրա իրավունքներն ու պարտականությունները բացատրելու՝ իրավասու պաշտոնատար անձի պարտականության կատարման իրավական պահանջի կարգավորման մասով, ենթակա են կիրառման թիվ ՎԴ/13509/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 03.02.2023 թվականի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով արտահայտված և սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից վերահաստատված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանն անդրադարձ չի կատարել Ծառայության 02.02.2025 թվականի թիվ 8250079240 որոշման անվավերության վերաբերյալ հայցվորի կողմից վերաքննիչ բողոքում ներկայացված բոլոր հիմքերին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության՝ վիճարկվող որոշման անվավերության վերաբերյալ վերաքննիչ բողոքում ներկայացված մյուս հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու և դրանց հիման վրա Դատարանի վճիռը վերանայելու նպատակով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 27.04.2026 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ սույն որոշմամբ սահմանված ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող ***Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ